Ժ.

Ա՛յ իմ մարգարտէ շարոց, պագ մի տուր որ ես մեռնիմ ոչ:
– Ծօ՛ թուխ ու գըռուզ կըտրիճ, պա՛գ հազար թէ պարծենաս ոչ.
Յորժամ ի մէջլիս նըստիս՝ հարբենաս, ուղղել կարես ոչ.
Ձպագն ի քեզ պարծանք հաշուես, զամօթուդ տեղըն գիտես ոչ:

Ժ Ա.

Ասես թէ եաղութն ես դու կամ զըմութ կամ ամբարինայ
Թափած է ի քո վերայ վարդեջուր հազար փիալայ:
– Հո՛գի, թէ զայժ ինձ ասիր, նա ճերմակ ծոցըս մի ծառայ.
Ձկոճկիկս այլ արձակ անեմ, մո՛ւտ ի մէ՛ջըն յէշրաթ արա՛:

Ժ Բ.

Առին զիմ եարին սուրաթն, տարան Չին –Մէչին արմաղան,
Տարան եւ ի ժուռ ածին, սուրաթին նըման չըգըտան.
Հինգ հարիւր ու վեց հազար նախշարարն ի մէկտեղ եկան,
Մէկըն չըկարաց գըրել զիմ գարին սուրաթն ի նըման:

Ժ Գ.

Խօ՛շ եարիկ, կարե՞ս գիտել դու իմ գա՛լըս քեզ գիշերով.
Եկի զքեզ ի քուն գըտայ, պագ առի հազար համարով.
Չըգիտեմ թէ քո՞ւն էիր թէ տըւիր դու սըրտի կամով,
Կամ խիղճ ի մըտիդ բերիր թէ մանուկ մ'երկեր գիշերով:

ՔՍԱՆԵՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՂԱՇԱՐՔ

Ա.

Ձինչ նուռն ի նըռան վըրայ, ես եմ ձեր դըռանն ի վըրայ.
Ձինչ հաւն ի կըտինվրայ, ես ի ձեր երդիցն ի վըրայ.
Կամ ա՛ռ կամ խապուլ արա՛, կամ գըրէ՛ զանձըս քեզ ծառայ,
Թէ չէ առուփախ կ'անեմ, աչքըդ լայ, անձըդ երերայ:

Բ.

Ի՞նչ կ'անեմ կամ ի՞նչ լինիմ, որ կ'երի սըրտիկս ամէն օր.
Կու սիրեմ ազապ աղջիկ, կու ձըգէ պագիկն օրմէն օր.
Քէրամ քեզ, եա՛ր, ա՛խ արա՛, կուգամ քեզ հանց խաֆիլ օր.
Հոգեկ, ի՞նչ եար, ա՛խ, առնեմ, ինչ ունիմ ի նա է այսօր: